Շահերի բախման կանխարգելմանն ուղղված քաղաքականություն

Արժեթղթերի շուկայում գործարքներ իրականացնելիս Բանկը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Հաճախորդների պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով բացառապես հաճախորդի շահերի պաշտպանությունից: Շահերի բախման կանխարգելմանն են ուղղված Բանկի կողմից իրականացվող հետևյալ միջոցառումները.

Յուրաքանչյուր ներդրողի հնարավորություն է ընձեռվում Բանկի միջնորդությամբ ձեռք բերել/վաճառել արժեթղթերը առաջնային և/կամ երկրորդային շուկաներում (կարգավորվող <<Հայաստանի ֆոնդային բորսա>> ԲԲԸ կամ չկարգավորվող), Բանկում հաճախորդի հաշվին անհրաժեշտ միջոցների և գանձվող միջնորդավճարի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

- Այն դեպքում, երբ հաճախորդները (ներդրողները) նույն թողարկման արժեթղթերի ձեռքբերման/ վաճառքի միևնույն գնով Հայտ են ներկայացրել, և հայտը բավարարվել է մասնակիորեն, ապա բավարարումը կատարվում է ժամանակագրական սկզբունքի համաձայն (ներդրողի ներկայացրած հայտում նշվում է հայտի ներկայացման ժամը)՝ առաջնահերթությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտին:
- Այն դեպքում, երբ հաճախորդները (ներդրողները) միաժամանակ նույն թողարկման արժեթղթերի ձեռքբերման/ վաճառքի հայտ են ներկայացրել միևնույն գնով, և հայտը բավարարվել է մասնակիորեն, ապա Բանկը բավարարում է հաճախորդների հայտերը համամասնորեն:
- Այն դեպքում, երբ Բանկը և ներդրողը նույն թողարկման արժեթղթերի ձեռքբերման / վաճառքի հայտ են ներկայացրել միաժամանակ և միևնույն գնով, և հայտը բավարարվել է մասնակիորեն, ապա Բանկն առաջնահերթ բավարարված է համարում ներդրողի հայտը:
- Տարբեր ներդրողներից նույն թողարկման արժեթղթերի միևնույն գնով առքի և/կամ վաճառքի հայտերի ստացման դեպքում Բանկը կարող է հայտերը ներկայացնել մեկ հայտի տեսքով և գործարքի կատարման դեպքում հայտերը ևս բավարարված են համարվում ժամանակագրական սկզբունքի համաձայն:
- Եթե ընդունվում են հանդիպակաց հայտեր, ապա միևնույն կատարման գնով հայտերի դեպքում Բանկը գործարքը կատարում է կարգավորվող շուկայից դուրս նախապես այդ մասին տեղեկացնելով ներդրողներին, բացառությամբ այն արժեթղթերով գործարքների, որոնցով գործարքների կնքումը պարտադիր է կարգավորված շուկայում: